եպիսկոպոսի ղեկավարութեամբ։ Հեղինակը ջրում է և այն ամբաստանութիւնը, որ տպուեցաւ «Արևելք»-ի և ուրիշ թերթերի մէջ, որպէս թէ Սուքիաս եպիսկոպոսը մի քանի կուսակից միաբանների հետ Մակարի ընտրութիւնը հաստատել տալու նպատակով դիմել է ներքին գործոց նախարարին և կասկածելի ցոյց տուել Մելքիսեդեկի անձնաւորութիւնը։ Անձնական բացատրութիւններից և հայեացքներից դատ, որոնք նշանակութիւն ունին իբրև ժամանակակից անձնաւորութեան վկայութիւն, գրքի արժէքը բարձրանում է՝ որպէս պատմութեան աղբիւր՝ մէջ բերուած պաշտօնական թղթերով և նամակներով։

Գ.

ՄՈՒՐԱՑԱՆ

(† ԳՐԻԳՈՐ Տ. ԾՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ)

Հայ, առանց այն էլ վերջերս աղօտացած գեղարուեստական գրականութեան մշակների շղթայի օղակներից մէկն էլ քակուեց...

Անցեալ օգոստոս ամսի 30-ին Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում, ծանր հոգեկան հիւանդութիւնից յետոյ մեռաւ հայ տաղանդաւոր վիպագիր Մուրացանը (Գրիգոր Տէր Յովհաննիսեան)։

Մեր գրականութեան մէջ Մուրացանը, գրաւում է պատուաւոր տեղ իւր զեղուն ու ճոխ լեզուով, վիպասանական շնորհալի գրչով. նա և թատերագիր էր. նորա Ռուզան-ը շատ երկար հայ բեմի ինքնուրոյն ռէպերտուարի զարդն էր կազմում և կազմում է այժմ, իբրև պատմական—ազգային պիէսների մէջ լաւագոյնը։

Մուրացանը գրչի համեստ մշակներից էր և ռէկլամներից խուսափող. գուցէ մասամբ հէնց այդ պատճառով էլ հասարակական ասպարէզում մնում էր վարագոյրի ետև։

Նա գրական ասպարէզ եկաւ ութսունական թուականների սկզբներին, իւր գրչի արդիւնքները ամփոփելով

գլխաւորապէս մեր պարբերական հրատարակութիւնների էջերում։ Նա աշխատակցել է «Փորձ» ամսագրին, գրել է «Մեղու Հայաստանի» («Հայ բողոքականի ընտանիքը»), «Արձագանք», (բացի շատ մանր զրոյցներից—Տիկին Փիրալեան և այլն—նաև նորա, իբրև վիպասանի գլուխ գործոցը—«Մարդպետունի» վէպը), «Նոր–Դար» («Իմ կաթոլիկ հարսնացուն», «Անպատճառ իշխանուհի», «Խորհրդաւոր միանձնուհի», «Լուսաւորութեան կենդրոնում» և այլն) լրագրերում։ Ամեն տեղ էլ Մուրացանի գրչի արդիւնքները կարդացուել են բուռն հետաքրքրութեամբ։ Լաւ յայտնի է, որ Նոր–Դարի այն համարները, որոնց մէջ Մուրացանի վէպը կար—ձեռքից ձեռք էր խլուում ու յափշտակութեամբ կարդացուում։

Բացի յիշեալներից, իւր կեանքի վերջին շրջաններում հանգուցեալ վիպասանը գրում էր «Լումայ» («Նոյի ագռաւը», «Անդրէաս երէց» և այլն) և «Թատրոն» («Ռուզան», «Ցպահանջ») հանդէսներում։ Իւր միակ, բայց նշանաւոր պիէս «Ռուզան»-ը նա տպագրեց բաւականին ուշ և դորա միակ պատճառը հեղինակի բուռն ձգտումն էր կատարելագործել այդ գրուածքը։ Նա մինչև տպագրուելը մեր բեմերի վերայ խաղացուում էր ձեռագրով և շատ հետաքրքրական է իմանալ արդեօք ձեռագրերով այդ յաճախակի կրկնուող ներկայացումները տալիս էին նորա քրտնաջան և աղքատիկ հեղինակին գոնէ մինիմում վարձատրութիւն...

Իւր կեանքի վերջին օրերում նա էլի զբաղուած էր «Ռուզանի» մշակութեամբ, որի մէջի երգերի կտորները նա խնդրել և եղանակել էր տուել մեր միակ տաղանդաւոր երաժշտագէտ Հ. Կոմիտաս վարդապետին։

Ընդհանրապէս Մուրացանը մեր կեանքի խորթ զաւակներից էր և նորա կեանքը անցաւ տանջանքների բովից ու շատ ձախող հանգամանքների մէջ. նա զոհ էր և ընտանեկան դժբախտ կեանքի։ Ուրիշ աւելի յարմարաւոր պայմաններում գուցէ նորա անձնաւորութիւնը դառնէր մեր այլ նշանաւոր գործիչների շարքում։

Ծննդեամբ Մուրացանը Շուշեցի էր (1854 թուին), իսկ իր ուսումը աւարտել էր նոյն քաղաքի Հայոց թեմական հոգևոր դպրանոցում, որից անմիջապէս յետոյ մտել էր ուսուցչական փշոտ ասպարէզը և ապա անցել Թիֆլիս առևտրական մի հիմնարկութեան մէջ հաշուապահական պաշտօնով։—

Թէև խղճուկ էր հայ վիպագրողի կեանքի մնացորդը, բայց դորա փոխարէն չքեղ էր նորա թաղումը. առհասարակ հայերս չքեղ թաղելու խիստ մասնագէտ ենք։

Սեպտեմբերի 7-ին թաղեցին Մուրացանին։ Սգահանդէսը կառավարում էր այդ առթիւ կազմուած մասնախումբը։ Եկեղեցական առաջի արարողութիւնը կատարուեց հէնց հիւանդանոցում հանդիսադրութեամբ թեմական առաջնորդի, որ և առաջի դամբանականը խօսեց հանգուցեալի դագաղի վրայ վանքի Մայր եկեղեցում։ Թէ վանքի բակում և թէ գերեզմանատանը դագաղի վրայ խօսողներ եղան բաւականին։ Հայ հասարակութեան համարեա թէ բոլոր խաւերը մասնակցել էին թաղման սգաւոր հանդիսին թէ անձամբ և թէ ներկայացուցիչների միջոցով։ Ներկայացուցիչներ եղել են նաև շատ քաղաքներից ու հաստատութիւններից, ի թիւս որոց և Մայր Աթոռի ձեմարանի կողմից։ Դրուել են և պսակներ, ինչպէս և աւուել դրամական և այլ նուիրաբերութիւններ, ստացուել են յանձնաժողովի անուամբ և բաւականին թուով ցաւակցական հեռագրեր, ի միջի այլոց և «Արարատի» խմբագրութիւնից։ Սգահանդիսի բոլոր ընթացքում կարգի վրայ հսկել է կարգադրիչ յանձնաժողովը, որ արժանի է ի հարկէ բուռն շնորհակալութեան։—

Մուրացանը թաղուեց Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը իր դրչակից Ծերենցի և Ռաֆֆու մօտ։

Հանգի՛ստ ոսկորներիդ բեղմնաւոր հայ դրչակիր։—

† ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

Տաճկահայոց և մեզ լաւ ծանօթ դէմքերից մէկն էր Մարկոս Աղաբէգեան, որ օգոստոսին յետին չքաւորութեան մէջ կնքեց իր մահկանացուն։